ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 4058

« 25 » մայիսի 2023թ.

ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԱԶԻԶՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն, մասնավորապես՝

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ում նշված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումով հնարավոր չէ տեսնել ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **մայիսի 26-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունը չշտկելու դեպքում՝ հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կապ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/18» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ /+37410/ 511-774, 511-788